


26. 448

ՏԱՐԻԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԵՐԻ, ՄԻԱՑԵ՞Ք



II

„ՀՕՅՏՆԱՐՓՈԳԻ“

ԿԱՆՈՆՆԵՐ ՅԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12 AUG 2013

26.448

15 JAN 2010

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԿՐ ԸՆԼՈՒ յԵՐԿՐՆԿՐԻ միացեք

## № 1 ՏՆԱՐՓՈԴԻ ԴՐԱՅՎԱՐԱՆ № 1

334-64

4-63 Ա. Ի. ՎԻՃՆԵՎԵԶԿԻ

## ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ

# ՏԵԱՅՆԱԳՈՐԾԸ

Արեւատագործական կոռպերացիայի  
Փոխոգնության Գանձարկղի մասին



## ՏԵԱՅՆԱԳՈՐԾՆ ԻՆՉ ՊԵՏԸ Ե ԻՄԱՆԱ ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՂԻ ՄԱՍԻՆ

Ամեն անայնագործ և արհեստավոր, անշուշտ,  
լսած կլինի արհեստագործական կոսպերացիայի կազմակերպութ փոխադարձ ոգնության գանձարկղի մասին։ Միայն թե, յուրաքանչյուր տնայնագործ և արհեստավոր դեռևս չդիտն, ինչպես վոր պետք է, թե դա ինչ կազմակերպություն է, ինչ խնդիրներ կան նրա առջև դը ված և ինչ նպատակներ են հետապնդում նա։ Յեթ սակայն, յուրաքանչյուր անայնագործի և արհեստավորի համար շատ կարենք և իմանալ այդ բաները։

Հենց դրա համար ել այս գրքույկի մեջ մենք կխոսենք այդ գանձարկղների մասին, թե ինչի համար և ինչպես են կազմակերպվում, թե ով և զեկավարում և վերահսկողության յենթարկում այդ գանձարկղները, ինչպես են կատարվում աշխատանքները և տնայնագործին ու արհեստավորին ինչ են տալիս։

### 1. Աշխատավորների անապահով վիճակը յեվ փոխադարձ ոգնությունը

Բանվորները, բատրակները, ծառայողները, անայնագործներն ու արհեստավորները, վորոնք ապ-

րում են իրենց սեփական աշխատանքով և այլ աղբյուրից յեկամուտ չունեն, նրանք կարող են իրենց ուտելիթիքի, հագուստի, բնակարանի և այլն պահանջները բավարարել այն ժամանակ միայն, յերբ աշխատում են և իրենց աշխատանքի համար վարձատրություն ստանում այս կամ այն ձեռվ (փողով, մթերք և այլն): Իսկ աշխատելը, մարդ կարող ե, իհարկե, մինչև այն ժամանակ միայն, քանի դեռ ընդունակ ե աշխատանքի, այսինքն քանի դեռ ուժ և առողջություն ունի:

Սակայն, դժբախտաբար, կյանքի մեջ շատ պատճառներ են լինում, վորոնք աշխատավոր մարդու ուժերը խլում են և առաջ բերում աշխատունակության կորուստ:

Այդ պատճառներից պիտի համարել բազմատեսակ հիվանդություններ, վնասվածքներ և ծերությունը, վորի հետևանքը լինում ե աշխատունակության կորուստը. իսկ կանաց մեջ՝ հղիության շրջանը ծննդաբերությունից առաջ, ծննդաբերության ժամանակ, ինչպես նաև վորոշ ժամանակ ծննդաբերությունից հետո, և այլն:

Այս դեռ բավական չե: Իր պահանջները բավարելու հնարավորության համար մեն-մենակ առողջություն և աշխատունակություն ինչ կարող ե տալ աշխատավորին: Իր պահանջների բավարարությանն անհրաժեշտ յեղած փողը ձեռք բերելու համար նա դեռ պետք ե հնարավորություն ունենա իր բանվորական ուժը՝ վորեն բանի ծառայեցնել, նա դեռ պետք ե աշխատանք ունենա:

Են սակայն, կյանքի մեջ շատ ե պատահում,

վոր կատարյալ առողջ և աշխատունակ մարդ իր ուժերը վոչ մի բանի ել չի կարողանում ծառայեցնել, այսինքն աշխատանք չի ունենում:

Պատահում ե, վոր վարձու բանվորը կորցնում ե իր աշխատանքը, վոր ծագուրկ և դառնում: Պատահում ե, վոր տնայնագործը և արհեստավորը իր աշխատանքների համար հումույթ չի ունենում, կամ պատվեր չի լինում:

Ցերե ուրեմն աշխատավոր մարդը վաստակ չի ունենում, վոր անհրաժեշտ ե իր գոյության համար, ապա և նա շուտ կամ ուշ ընկնելու յի ծանր կարիքի մեջ: Բանվոր, ծառայող, տնայնագործ և արհեստավորը, բոլոր նրանք, վորոնք ապրում են միայն իրենց սեփական աշխատանքով, յերբեք չեն կարող հանգիստ աչքով նայել իրենց ապագայի, նույնիսկ ամենամուտավոր ապագայի վրա:

Այսոր, թե ինքն և թե իր ընտանիքը ուտելիք ել ունեն, հագուստ ել, բնակարան ել. բայց եգուց գալիս ե հիվանդություն, դժբախտություն ե պատճեռմ, անգործ ե մնում, ընտանիքի կերակրող մեռնում ե, և ահա իր ամբողջ բաղդն ել շուռ ե գալիս: Այսպես ուրեմն, բանվորը, իր ամբողջ կյանքի ընթացքում տանջվում ե այդ ան ապահով վիճակից, վորը ամեն որ և ամեն ժամ սպառնում ե նրան կացիքի մեջ քցել, քաղցած թողնել կամ սառած:

Այդ մշտական սպառնալիքից աշխատավորներին ապատելու համար խորհրդային իշխանությունը միշտ որենքներ ե հրատարակել բանվորների ու ծառայողների սոցիալական ապահովագրության մասին և տնայնագործների ու արհեստավորների փոխադարձ

ոգնության վերաբերմամբ: Այդ որենքների շնորհիվ, հիգանդությունը, հաշմանդամությունը, ծերությունը, գործազրկությունը և այլն, այլևս այնքան սարսափելի չեն Խորհրդային Միության աշխատավորների համար, քանի վոր սոցիալական ապահովագրության և փոխադարձ ոգնության կազմակերպությունը նրանց համար դարձավ մի զորավոր զարման իրենց անպահով վիճակի դեմ:

## 2. Ի՞նչ բան է փոխադարձ ոգնությունը

Ի՞նչ բան է փոխադարձ ոգնությունը: Այս հարցին լավ կենի պատասխանելու որինակով:

Յերևակայեցեք, վոր արտելի անդամ Միուկարյանը՝ ընդհանուր արհեստանոցում աշխատելիս՝ ընկալի մեքենայի առել, թեր կտրվեց ու դարձավ հաշմանդամ: Պետրոսյանը, վոր այդ ժամանակ արհեստանոցում աշխատողներին հսկում եր, սկսեց Միուկարյանի ընտանիքի ոգախն նվիրատվություն հավաքել՝ պահնից մի շահի, նրանից յերկու, մյուսից տասը. Յեվ վորովհետեւ դժբախտությունը պատահեց ճիշտ այն որը, յերբ ոսճիկ հյիկ բաշխում, զրա համար ել Պետրոսյանը կարողացավ մոտավորապես հարյուր ոռւրի հավաքել և Միուկարյանի ընտանիքին տալ:

Յեվ այս յեղագ ահա փոխադարձ ոգնություն, միայն թե մի այնպիսի փոխադարձ ոգնություն, վոր կատարելապես պատահական եր և անկազմակերպ:

Այդ ոգնությունը պատահական և անկազմակերպ եր այն պատճառով, վոր այնտեղ պատահաբար գըտնվեց այդ բարի մարդը՝ Պետրոսյանը, վոր նեղություն

հանձն առավ հանգանակություն կատարելու, ինչպես նաև պատահաբար հավաքվեց մոտ հարյուր ոռւրին, վորովինեան հենց նվիրատվությունն ել պատահական եր, մեկը տվեց մի ոռւրի, մյուսը՝ կես ոռւրի, յերշորդը՝ քառորդ ոռւրի, իսկ չորրորդը վոչ մի բան ել բավեց:

Իհարկե, ամեն մարդ հասկանում ե, վոր այդպիսի անկազմակերպ փոխադարձ ոգնությունը հենց միայն նրա համար, վոր անկազմակերպ ե, չի կարող լուրջ դարձան համարվել մարդկանց անապահով վիճակի դեմ:

Դրա համար ել, աշխատավորները՝ ձգտելով ազատվել իրենց սպառնացող անապահով վիճակից՝ հենց են զլիսից արդեն ձեռնարկեցին կազմակերպչական բնույթ տալ փոխադարձ ոգնությանը, Բանվորները, արհեստավորներն ու մյուսները աշխատավորության փոխադարձ ոգնությանն այդպիսի կազմակերպչական բնույթ տվին հենց նրանով, վոր այս կամ այն զժբախտության դեպքում ոգնության հաճանելու համար անհրաժեշտ յեղած միջոցներն սկսեցին հավաքել վնչ թե զժբախտություն պատահած ըռպեյին, այլ առաջուց. և հավաքած միջոցներն ել գործադրեցին վոչ թե պատահաբար այնտեղ գտնված մի քանի մարդու՝ Պետրոսյանի ձեռքով, այլ նույն աշխատավորների խմբից հատկապես ընտրված մի վորոշ կոլեկտիվի ձեռքով, իբրև վարչական մարմին (վարչություն, բյուրո և այլն), վոր աշխատում ե ամբողջ կոլեկտիվի կողմից առաջուց մշակած կանոններով:

Հենց այս ձեռվ ել, դեռ հին ժամանակներ, առաջ յիշան արհեստավորների փոխության դրա-

մարկղներ, բանվորների արհեստակցական միությունների կազմակերպած դրամարկղներ և այլն:

Այս ըոպելիս ել, կազմակերպչական այդպիսի բնույթ ունեն այն փոխադարձ ողնության դրամարկղները, վորոնք կազմված են զավկոմներին, ֆարկոմներին և տեղկոմներին կից՝ զանազան ձեռնարկների և հիմնարկների մեջ, ինչպես նաև գյուղացիական փոխոգնության կոմիտեները՝ գյուղում:

Այս բոլոր պարագաներում գործը գրված ե այսպիսի հիմքերի վրա, վոր փոխադարձ ողնությանը մասնակցելու ցանկություն ունեցողը կամավորապես արձանագրվի դրամարկղին, իր վաստակից կամ յեկամուտներից հշտապես մի բան քցի դրամարկղի մեջ, անմիջականորեն կամ ընտրված լիազորների միջոցով մասնակցի հավաքված գումարներ բաշխելու աշխատանքին, և այլն:

Այդ կերպ կազմակերպված գոխոգնությունն արդեն նշանակալից չափով ավելի լավ միջոց ե աշխատավորներին անապահով վիճակի դեմ, քան ան կազմակերպ պիտությանը, բայց այդ ել դեռևս բավարար չե աշխատավորությանը իրական ապահովություն տալու դժբախտության ժամանակ: Եթե այդ անբավարար ե ամենից ավելի այն պատճառով՝ վոր բոլոր վերոհիշյալ կազմակերպությունների մեջ (արհեստավորների խմբակային դրամարկղներ, արհմիություններին կից կազմակերպված փոխոգնության դրամարկղներ, մեր որերում զավկոմին, ֆարկոմին և տեղկոմին կից կազմված փոխոգնության դրամարկղներ և գյուղացիական փոխոգնության կոմիտեներ) փոխոգնության գումարները հավաք-

վում են առանց նախապես վորեկ հաշվառում կատարելու այն դժբախտությունների վերաբերմամբ, վորոնք կարող են պատահել տվյալ կոլեկտիվի մեջ: Արհեստավորական մի վորեկ խմբակային դրամարկղ՝ իր անդամներին ինքնահարկման յենթարկելով՝ գումարներ ե հավաքել՝ աջակցություն ցույց տալու համար հիվանդության, հաշմանդամության, մահվան դեպքում, և այլն: Մակայն, այս կամ այն չափի ինքնահարկում, այս կամ այն մուտք վորոշելով, դրամարկղը առաջուց չգիտեր, թե իրվանդության, հաշմանդամության և մահվան քանի դեպքեր են լինելու իր կոլեկտիվի մեջ: Դրամարկղի այդ յեղանակով հավաքած գումարները յերբեք չեյին կարող համտպատասխան լինել այն կարիքներին, վորոնք յերեան եյին գալիս այդ կոլեկտիվում, կամ դժբախտության այն դեպքերին, վորոնք ոգնություն եյին պահանջում դրամարկղից, Հետևանքն այն եր լինում վոր, մեկ տարի դրամարկղում ավելորդ գումարներ եյին մնում, իսկ մյուս տարին, յերբ, գուցե մեծ չափով համաճարակներ են լինում, դժբախտ դեպքեր, հրդիններ և այլն, դրամարկղն ստիպված եր լինում ոգնությունը մերժել նույնիսկ ոուր կարիքի ժամանակ:

Դրա համար ել, աշխատավորները, բանվորներն ու ծառայողները յերբ հասկացան, թե ինչքան պակասավոր ե այդ հասարակ, թեև կազմակերպված փոխոգնության ոգնությունը, սկսեցին ձգտել փոխոգնության այնպիսի դրամարկղներ կազմակերպելու, վորոնք նման թերություններ չունենան:

Այդ վերոհիշյալ թերությունները, սակայն, կարելի յի կատարելապես վերացնել, դրա համար պետք

և միայն փոխոգնության դրամարկղի աշխատանքները դնել ապահովագրական հիմքերի վրա:

### 3. Ինչ բան է ապահովագրությունը

Յերեակայեցնք, զոր Միսկարյանին պատահած դեպքից հետո Պետրոսյանն արտելի հետ սկսեց հատեյալ խոսակցությունը. «Դուք տեսնում եք, ընկերներ, վոր սրանից յերեք տարի առաջ մեր արտելի մեջ 10 դժբախտ դեպք պատահեց, յերկու տարի առաջ՝ 9 դեպք, իսկ մի տարի առաջ՝ 11 դեպք։ Մեղ մոտ, ուրեմն, միջին հաշվով տարեկան 10 դժբախտ դեպք ե տեղի ունենում։ Յեթի ամեն մի տուժողին 100 ռուբլու չափով սպնություն հասցնենք, ուրեմն տարեկան միջին թվով 1000 ռուբլի պետք ե։ Մեր արտելում աշխատում ե 500 մարդ. ուրեմն, վորպեսզի մեր փոխօգնության դրամարկղի միջոցով կարողանանք ապահովագրել մեր բոլոր տուժողներին, պետք ե մեջից ամեն մեկը տարեկան 2 ռուբլի մտցնի դրամարկղը։ Յեկեք մեր կանոնադրության մեջ հենց այդպես ել արձանագրենք։ Յենթաղը թի արտելի բոլոր անդամները Պետրոսյանի հետ համաձայնվեցին և սկսեցին տարվե տարի իրենց վորոշած յերկու ռուբլի մուտքը կատարել։ Այս դեպքում մենք ունենք նույնպես կազմակերպված փոխօգնության մի որինակ, և են ել այնպիսին, վոր հաստատված ե վորոշ սկզբունքների վրա, թի պետք ե նախապես հաշվառման յենթարկել այն դժբախտությունները, վորոնց համար գանձարկղը ոգնության պետք ե հասնի։ Տվյալ դեպքում փոխօգնության գանձարկղի գումարները հա-

մապատասխանում են արդեն այն կարեֆներին, վորոնք կարող են առաջ գալ այդ կոլլեկտիվի մեջ, և դրա համար ել գանձարկղի ոժմանդակությունը շատ ավելի հաստատում է լինում, ու այն ել, բոլոր դըժբախտությունների ժամանակ և վոչ թե պատահական կերպով։

Այս արդեն հասարակ փոխօգնություն չե, ոյք այնպիսի փոխօգնություն, վոր ապ առ զագրական բնոււթյունը կը ունեմ զլիամուրապես այն պատճառով, վոր ազյալ կուլեկտիվի մեջ պատահած դժբախտություններն առաջ հաշվությունը կ յենթարկում և համապատասխան թվով դժբախտությունների վրա, վորոնք ավյալ կոլլեկտիվի մեջ կարող են առաջ գալ։

### 4. Ինչ բան է սոցիալական ապահովագրությունը

Մարդու առորյա կյանքի մեջ բազմատեսակ դժբախտություններ կարող են առաջ գալ. Հրդեհը կարող ե վոչնչացնել տունը, դարադը կարող ե կոտորել անասուններին. Եթիանդությունը կարող ե վաթակից զրկել և այլն։

Դժբախտությունը, վոր առորյա կյանքում սպառնում ե մարդին, ուրիշ կերպ կոչվում ե ոփսի (այս բառը նշանակում ե, թի ամեն մարդ այդ տեսակ դժբախտության յենթակա յե, դրա վտանգի տակ և գտնվում), և յեթե այդ ոփսի պահովագրության յենթեպքում

Թարկվի, այն ժամանակ դա կեռչվի ապահով առ պահանջան ու իսկ:

Այսպես ուրիշն, հրդեհից ոխոկ կա տունը կորցնելու, դարձաղից՝ կովը, հիվանդության, հաշմանդամության կամ գործազրկության հետևանքով՝ վաստակը: Եյդ բոլորը ոխոկներ են, վորոնք դառնում են ապահովագրական ոխոկներ, յեթե վորեն կազմակերպություն առաջուց հաշվառման և յենթարկում նրանց առաջ գալու հնարավորությունը և իր վրա պարտք և դնում ոգնության հասնել նրան, ով առաջ յեկած դժբախտության վասնգի տակ ե ընկնում:

Ապահովագրական և վոչ-ապահովագրական բազմաթիսակ ոխոկների ընդհանուր զանգվածից պետք ե ջոկել սոցիալական ոխոկները, այսինքն այն ոխոկները, վորոնք կապված են հասարակական կառուցվածքի հետ: Եեվ ժամանակակից հասարակության կառուցվածքի հետ կապված են ամենից ավելի այն ոխոկները, վորոնք կարող են վաստակի կորուստ առաջ բերել ճիշտ այն պատճառով, վոր ժամանակակից հասարակության մեջ բոլոր աշխատավորների համար ել վաստակը հատկապես հանդիսանում և իրենց բարեկեցության հիմքը:

Եյդ պատճառով ել, հրդեհի հետևանքով տուն կորցնելու ոխոկը, կամ դարձաղի հետևանքով կով կորցնելու ոխոկը՝ հասարակ ոխոկ եր են. իսկ հիվանդության, հաշմանդամության կամ գործազրկության հետևանքով աշխատավարձը կորցնելու ոխոկը սոցիալական ոխոկների համար ել:

Այն ապահովագրական կազմակերպությունը, վոր ժը վրա պարտք և դնում այս կամ այն կոլեկտիվ

ապահովագրել հրդեհի դեմ, անասունների համահարակի դեմ, և այլն, դա հասարակ ապահովագրական կազմակերպություն ե, իսկ այն ապահովագրական կազմակերպությունը, վոր իր վրա պարտք և դնում այս կամ այն պատճառով աշխատավարձը կորցնելու վտանգի դեմ ապահովագրելու—դա սոցիալական ապահովագրության կազմակերպություն ե:

Ուրեմն, սոցիալական ապահովագրության մի առանձնահատուկ ձեւ է, վորը հիմնված է ապահովագրական ոխոկների նախական հաշվառման վրա և վորի նպատակն է աշխատավորներին ապահովագրել իրենց աշխատավարձը կորցընելու վառականությունը պահպան կից:

ԽՍՀՄ միջ սոցիալական ապահովագրություն կատարում են ապահովագրական դանձարկդները: Բայց այդ գանձարկդներն ապահովագրում և յերաշխավորում են վարձու աշխատանքով առլրողներին միայն բանվորներին ու ծառայողներին: Ծնայնագործներն ու արհեստավորները սակայն, սոցիալական ապահովագրության որենքների տված բարիքները չեն վայելում և վորեն ոգնություն նրանցից սպասել չեն կարող: Եեվ սակայն, տնայնագործների և արհեստավորների մեծ մասը, բոլոր աշխատավոր տնայնագործներն ու արհեստավորները, հիվանդության, մասսավաճքի, հաշման գամության, ծերության և այլ պատճառներով կորցնում են իրենց աշխատավարձը բանվորների ու ծառայողների պես:

Թւրենն աշխատավոր տնայնագործներն ու արհեստավորները, բանվորների ու ծառայողների նման, կարիք ունեն հիմանդրության, ծերության և մայրության ժամանակ տպահովագրված լինելու:

Խորհրդային իշխանությունը՝ այդ հանգամանքը նկատի առնելով՝ տնայնագործներին և արհեստավորներին իրավունք և տվել կազմակերպելու փոխողնության գանձարկղներ, վորոնք, ճիշտն ասած, տնայնագործների ու արհեստավորների համար պետք և հենց այն անեն, ինչ վոր բանվորների և արհեստավորների ժամանք անում են սոցիալական տպահովագրության գանձարկղները:

## 5. Փոխզնության գանձարկղի կազմակերպությունը

Տնայնագործների և արհեստավորների փոխողնության գանձարկղները, կամ, ինչպես ուրիշ խոսքով նրանց կոչում են, արհեստագործական կոոպերացիալի փոխողնության գանձարկղները գործում եյին, մինչև վերջին ժամանակներս, հատկապես նրանց համար դրված որևէ չներկայացներով, վորոնք ընդունված եյին 1928 թ. հունվարի 16-ին ՌՍՖՍՌ-ի կողմից։ Բայց 1929 թ. փետրվարի 1-ին ՌՍՖՍՌ կառավարությունն ընդունեց նոր որենք (վորը արդեն հրապարակված ե) վորը զգալի չափով ընդարձակեց փոխողնության գանձարկղների իրավունքները։

Այդ նոր որենքի համաձայն արհեստագործական կոոպերացիալի փոխողնության գանձարկղի անդամ կարող են լինել.

ա) Կոոպերատիվ-արհեստագործական ընկերություններ (արտելներ) և միություններ։

բ) Կոոպերատիվ ընկերություններ (արտելներ) և միություններ, վորոնց անդամներն զբաղվում են անտառային արդյունաբերությամբ։

գ) Արհեստագործական-վարկային, արհեստագործական-գյուղատնտեսական, վարկային-արհեստագործական-գյուղատնտեսական և խառն (համալարփակ) կոոպերատիվ ընկերություններ (արտելներ) և միություններ։

դ) Աշխատավորական արտելներ, վորոնք մտնում են արհեստագործական կոոպերատիվ միությունների մեջ։

յ) Յեկ առանձնակի անձինք, վորոնք 16 տարին լրացրել են և դրազվում են տնայնագործական (արհեստագործական) և ուրիշ տեսակի արդյունաբերության մեջ։ Նրանք կարող են վերոնիշյալ կազմակերպություններին անդամ լինել կամ չլինել, բայց մի պայման կա, վոր դրանք արհեստի կամ արդյունաբերության մեջ աշխատելիս մենակ լինել, կամ թե ընաանիքի անդամներով, կամ ել, իբրև ողնական՝ մեկեց ավելի վարձու բանվոր չունենան և յերկու ել աշակերտ։

Թե անայնա արհեստագործական կազմակերպությունները և թե առանձնակի տնայնագործներն ու արհեստավորները փոխագնության գանձարկղին անդամագրվում են կամավորապես, որենքը վոչ վոքի չի հարկադրում գանձարկղին անդամագրվել։

Փոխագնության գանձարկղը ղեկավարում են

հենց իրենք տնայնագործներն ու արհեստավորները, վորոնք անդամագրված են գանձարկղին:

Փոխոգնության գանձարկղի վարչական բարձրագործն մարմինը անդամների ընդհանուր ժողովն և այնտեղ, ուր վոր գանձարկղը շատ մեծ չե, իսկ խոշոր գանձարկղներում՝ լիազորների ժողովը: Ընդհանուր ժողովը կամ լիազորների ժողովը հաստատում և կանոնադրությունը, վորով անդամներին ամեն տեսակ ոգնություն կարելի յե տալ, վորոշում և փոխոգնության գանձարկղում լինելիք մուտքերի չափը, մշակում և դրամարկղում յեղած գումարների և ֆոնդերի կազմության և ծախսելու կարգը, նայում և, տարեկան հաշվետվությունները, դրամարկղի գործունեյությանն նախահաշիվներն ու պլանները, քննարկում և անդամների բողոքները, և այլն, և այլն:

Վարչական այն մարմինը, վոր անմիջականորեն ղեկավարում և գանձարկղի բոլոր աշխատանքները, վարչությունն ե, վոր ընտրվում և ընդհանուր ժողովի կամ լիազորական ժողովի կողմից: Վարչությունը սովորաբ լինում և թվով յերեք կամ հինգ մարդ, վորոնց մի մասը նշանակվում և դրամարկղի մշտական աշխատանքների համար, իսկ մյուս մասը, դրամարկղի գործերը ղեկավարում և միայն վարչականնիստերին մասնակցելով: Խոշոր գանձարկղներում, սովորաբ, լիազորների ժողովը, վարչությունից բացի, ընտրում են առև գանձարկղի խորհուրդը, վորը վճռում և առանձնապես կարենոր հարցերը, վորոնք չեն կարող մինչև լիազորների հերթական ժողովի հրավիրումը սպասել:

Գանձարկղի գործերը ներքին վերահսկողության

յենթարկելու համար ընդհանուր ժողովը կամ լիազորների ժողովն ընտրում են նաև վերահսկիչ հանձնաժողով, վոր պարտավոր և կանոնավորապես վերափնտթյան յենթարկել գանձարկղի վարչության ամբողջ գործունեյությունը:

Փոխոգնության գանձարկղը դործում և վնչ միայն որենքի հիման վրա, այլ նաև այն կանոնավրության, վոր գանձարկղի ընդհանուր ժողովը կամ լիազորական ժողովը հաստատել և ժողովրդական տնտեսության տեղական բաժանմունքի կողմից արձանագրվել:

Փոխոգնության գանձարկղը, իր կանոնագրությունն արձանագրել տալուց հետո ձեռք և բերում ինքնուրույն կազմակերպության բոլոր իրավունքները (գանում և իրավաբանական անձ) և, մասնավորապես, իրավունք և ունենում զանազան տեսակի գործարքներ կատարելու, հայց հարուցել և դատարանում պատասխանել և այլն:

## 6. Փոխոգնության գանձարկղի միջոցները

Փոխոգնության գանձարկղի միջոցները կազմում են. մուտքի վճարները, ամսական ապահովագրական վճարները, դրամարկղի կազմի մեջ մտած կոռպերատիվարհետագործական կազմակերպության (միությունների, արտելների, ընկերությունների) շահաբաժնից տրված հատկացումները, ժամկետանց ամսագիծարների տույժերը և դրամագլուխների տոկոսները:

Փոխոգնության գանձարկղի միջոցների մեջ ամենանշանակալից մասը կազմում են ամսական ապահովագների մասը:

վագրական վճարները: Համաձայն որենքի, այդ գուշամարների կամ կեսը կարելի յե վճարել կամ ել մի մասը արտելների (ընկերությունների) միջոցներից, իսկ մասյալ մասը պետք ե վճարեն հենց իրենք՝ տընայնագործներն ու արհեստագործները:

Ներկայումս, գործնականի մեջ, սովորաբար այդպես ել արփում ե: Մի շարք վայրերում ամսական ապահովագրական մուծումների կեսը վճարում են արտելների և ընկերությունների միջոցներից առանց արտելի անդամների աշխատավարձից վորեն բան կը ճատկելու (որ, համար Սարապուլի, Կալուգայի, Արյունի, Ստավրապոլի, Արմավրի, Ռոստովի, Հայաստանի և այլ վայրերի մեջ):

Մի շարք այլ վայրերում ել գանձարկղի միջոցները կազմվում են մասամբ արտելների միջոցներից, մասամբ ել հենց տնայնագործների միջոցներից (որ, համար Պակովի, Տուլայի, Վարչոնեժի, Կունգուրայի, Նովորոսիյսկու, Պերմի, Տագանրոկի և այլն մեջ),

Վերջապես, մի քանի տեղերում ել, արդյունաբերության առանձնակի կամ բոլոր ճյուղերում, փոխողնության գանձարկղին վերաբերող ամսական ապահովագրական մուծումները կատարում են կիսով չափ հենց իրենք անայնագործներն ու արհեստագործները (որ, համար Վոլոգդա, Կուզնեցկա և ուրիշ),

Յեզ հենց ապահովագրաւթյան մուտքի ու ամսագնարների չափն ել գանազան տեղերում զանազան տեսակ ե. Ամենից հաճախ մուտքի վճարը նշանակում են մեկից մինչև մեկ և կես ուրելի յուրաքանչյուր անգամի համար: Գատահում են թեև վայրեր ել, ուր-

մուտքի վճարը նշանակալիցից չափով բարձր ե, կամ թե ընդհակասակն, նշանակալից չափով ցածր ե:

Ապահովագրության ամսագնարները նույնպես զանազան չափով են փորոշվում: Ինչպես որինակ, Վագդեմիրի, Կալյազինսկու, Վորոնեժի, Ստավրովի գրամարկղներում այդ մուծումները վերցնում են 80%-ի չափով: Պավլովսկու, Բոգորոդսկու, Վյատկոցի, Որենքուրգի, Բարսապուլսկու մեջ՝ 100%-ի չափով: Պերմի, Իվանովսկու մեջ 110% ի չափով, Կալուգայում՝ 120%-ի չափով: և այլն:

Այդպիսի խոշոր տարբերությունը կախում ունի այն բանից, թե տվյալ վայրում փոխողնության գանձարկղը ինչպիսի նպատակներ ունի, և ինչ չափով կարողացել ե արդյունաբերությունն իր շուրջը հավաքել:

Կոռպերատիվ արհեստագործական կազմակերպությունների (միություն, արտել, ընկերություն) շահեց տրված հատկացումները սովորաբար վորոշում ե այդ կազմակերպությունների ընդհանուր ժողովը կամ լիտորական ժողովը: Ընդմին, թեև, կոռպերատիվ-արհեստագործական կազմակերպությունները, փորոշ մտնում են արհեստագործական կոռպերացիայի համառուսական միության սխմանիմինչ, Համկոռպարհեստմիության պահանջով, պարագաներ են իրենց շահերից փոխողնության զանձարկղը մտցնել հինգ տոկոսից վոչ-պակաս: Այն առուժերը, զոր գանձվում են զբամբակղին վերաբերող մուծումներն անձիշտ կատարելու պատճառով, որինքի համաձայն, զբամբակղի կանոնագրության մեջ վարչվում են ամսական 30%-ից վոչ-պակելի ժամկետին չմուծած գումարների համար:

Այս բոլոր ազբւուրներից փոխողնության գանձարկղը բավական նշանակալից գումարներ և հավաքում, վորի քանակության մասին կարելի յէ դատելութե ասենք, վոր 1929 թ. ԱՄՖՍԲ մեջ փոխողնության գանձարկղի յեկամուտները, հույժ մոտավոր տվյալներով, հաշված և 15 միլիոն ռուբլի։ Հնաց այդ փողով ել փոխողնության գանձարկղը կատարում ե այն աշխատանքները, վորոնք նրա վրա դրված են արհեստադաշտական կոռակերպացիայի փոխունության գանձարկղի մասին յեղած որենքով։

## 7. Հիվանդուրյան դեպքում ՏՐՎԱԾ ՈԳՆՈՒՅՈՒՆՆԵՐԸ

Տնայնագործը, ամենից ավելի, ոկնության կարիք ունի հիվանդության դեպքում։ Յեվ, ինարկի, այդ զարմանալի չի, վորովճետն անայնագործների և արհեստավորների կյանքի ու աշխատանքի պայմանները շատ հնարավորություններ են տալիս, վորպեսզի ամեն տեսակ հիվանդություններ առաջ գան նրանց մեջ։ Նեղիկ, խոնավ, ակածայից կեղտոտ բնակարանը, վոր հաճախ միաժամանակ ծառայում և թե իբրև արհեստանոց և թե իբրև տնային կենդանիների ախոռ, մըշտական կարիքը, ծանր, մաշող աշխատանքը, այս բոլոր նպաստում են, վոր անայնագործի ու արհեստավորի ընտանիքում, ինչպես նաև որ։ համար վարձութանքորի ընտանիքում լայն ծավալով տարածվեն զանգան հիվանդություններ։

Տնայնագործի և արհեստավորի առողջությանը շատ մեծ վնաս են հասցնում աշխատանքի վատ պայ-

մանները, հատկապես այնպիսի աշխատանքներ, վոր կատարվում են փոշառատ արդյունաբերության մեջ (ջուլհականոցի, մուշտակագործության, խողանակաշինության, պարանագործության, մետաղագործության մեջ), և այլն։

Փոշին, ընկնելով թոքերի մեջ, այնտեղ ել հաստատվում է, առաջ և բերում գրգիռներ, փոքրացնում ե թոքերի դիմադրական ուժը վարտիկի հանդեպ, վոր մշտակես ողի մեջ շուռ և տալիս և հիվանդություններ առաջ բերում։

Այդ պատճառով ել փոշառատ արդյունաբերությունների մեջ աշխատողների գրեթե կես մասը տառապում և թոքերի հիվանդությամբ, և այն ել այնպիսի զարնուրեկի հիվանդությամբ, վորպիսին և թոքախտը (բարակացավ)։

Փոշեղուրէ արդյունաբերության մեջ ամեն հարյուր աշխատավորից հազիվ և պատահում 15 մարդ, վոր թոքախին հիվանդություններ ունենաւ, իսկ կենդանական փոշի ունեցող արդյունաբերությունների մեջ (բրդի, մետաքսի մշակման) պատահում ե 45. ըռւսական փոշու (բամբակի, կանեփի մշակման) մեջ՝ 46, հանքարին փոշու (բրուտի, քարտաշի աշխատանքների) մեջ՝ 52. իսկ մետաղային փոշու (դանակի, մըկրատի, սղոցի, ասեղի արդյունաբերության) մեջ՝ մինչեւ անգամ 54։

Փոշին չի միայն, վոր ստիպողաբար հիվանդացումներ և առաջ բերում անայնագործների ու արհեստավորների մեջ։ Քիչ չեն նաև այն հիվանդությունները վոր առաջ են գալիս թռւավոր նյութերից, վորոնք գործածվում են արդյունաբերության մեջ։ Այդպիսի

թունավոր նյութերից և կապարը (տպարաններում գրաշաբարի մոտ, ներկարարական աշխատանքների մեջ, բրուտների մոտ ջնարակ և եմալ պատրաստելիս), սնդիկը (հալելու արտադրության և վոսկեջրելու մեջ), լուսածինը (փոսփորը) և այլն:

Թունավոր նյութերն արհեստանոցի ողի մեջ սփռված են փոշու կամ գոլորշու ձեռվ և աշխատավորները շնչում են այդ, թքի և ուտելիքի հետ կուլ տալիս, կամ թե թափանցում և կաշուց ներս և աստիճանաբար, որեցոր թունավորում ամբողջ որդանիզմը:

Աշխատավորների առողջությանը ըիշ վնաս չենացնում նաև արդյունաբերության հետ կապված տաքությունը, ցուրտը և խոնավությունը, վորոնք չեն թողնում, վոր մարմնից տաքությունը կանոնավոր կերպով դուրս կա և առաջ են բերում հյուծում, հատացավ, թոքային հիվանդություններ՝ մրսելուց կամ այլ տեսակի և այլն: Անկվածային արդյունաբերության աշխատավորները, վորոնք յերեմն պետք են աշխատեն զորանոցներում, հաճախ ստիպված են յենթարկվել 50 աստիճանի հասնող տաքության, ջերմության մեջ աղղեցության տակ մարմինը չափազանց տաքանում են, որպանիզմի ուժերը սարսափելի տկարանում են և հյուծվում, աշխատավորը մաշվում է, ընկնելով ցրտի կամ հոսանքի մեջ, իսկույն մըրսում է:

Այդ բանին մեծապես նպաստում են վատ շինկած արհեստանոցները, վորոնց դռները պինդ չեն փակվում, լուսամուտները ջարդված են, և այլն:

Աշխատանքի վատ պայմաններն առանձնապես մեծ վնաս են հասցնում կին տնայնագործների առող-

ջության: Ներկայումս գրեթե բոլոր արդյունաբերությունների մեջ ել կանայք աշխատում են: Մի շաբարգյունաբերությունների մեջ կանանց աշխատանքը վոչ միայն մրցում, այլ բացարձակ գերազանցում և տղամարդկանց աշխատանքին: Ինչպես, որինակի համար բամբակային արդյունաբերության մեջ կանանց թիվը կազմում է 64%, գորգի և մահուղի մեջ՝ 79%, մեքենա-հյուսվածքայինի մեջ՝ 82%, բամբակագործության մեջ՝ 87%, և այլն:

Ցեվ սակայն, կինը ֆիզիքապես ավելի թույլ եքան տղամարդը: Նրա որգանիզմն ավելի յի թուլանում հղիության և ծննդաբերության հետևանքով, Բացի այդ, նա, գրեթե միշտ ել տնային անտեսության մեջ արտաժամյա աշխատանքներ ունի յերեխաներին ու ամուսնուն խնամելու համար, և այլն: Ծանր ֆիզիքական աշխատանքը և թունավոր նյութեր գործածող արդյունաբերության մեջ աշխատելը վոչ միայն ինքնին վնասակար են բոլորի համար ել, այլև կանանց մեջ առաջ են բերում հաճախ վիժում և ծընած—մեռածներ, ինչպոք վերին աստիճանի վնասակար և անդրադառնում կանանց առողջության վրա: Այս բոլորը ցույց են տալիս, վոր տնայնագործի և արհեստավորի ընտանիքում հիվանդությունը գրեթե մշտական հյուր է: Ցեվ ահա, այդ հյուրերի այցելության հետ տնայնագործն ու արհեստավորը կորցնում են իր աշխատունակությունը ինչպես նաև իր աշխատավարձը:

Դեռ լավ է, յեթե նա ունի թեկուզ վոչ մեծ գյուղանտեսական ոժանդակ միջոցներ, վորոնք ձեռք են բերում իր ընտանիքի անդամների միջոցով և հնարա-

վորություն են տալիս մի կերպ ապրելու հիվանդության ժամանակի: Թեչե, շատ սարսափելի կլինիկը որոշայնագործի կամ արհեստավորի վիճակը, յեթե նա վորեւ զյուղատնտեսական ոժանդակ աղբյուր չունենար, կամ թե այնքան քիչ ունենար, վոր նրա վրա հյուս դնիլ կարելի չլինիկը:

Հարևանի, ծանոթի, բարեկամի ոգնությամբ կարող ես ապրել եսոր եգուց, մի շաբաթ: Բայց թնջպիտի անհս, յեթե հիվանդությունը յերկարածվում է շաբաթներով, ամիսներով կամ ել ավելի:

Այդ գեպքում բարեկամի կամ հարեանի ոգնությամբ չես կարող ապրել այստեղ պետք և իսկական ոգնություն, վորը տնայնագործին ու արհեստավորին տալիս և ահա արհեստագործական կոռպերացիայի փոխոգնության գանձարկը:

Այդ ոգնությունը կատարվում է հիվանդին զըրամական ոժանդակություն տալով ամբողջ հիվանդության ժամանակաշրջանի համար: Միայն թե, այդ ոժանդակությունը արվում է վնչ թե ամեն տեսակի հիվանդության համար, այլ այնպիսի հիվանդության զեպում միայն, յերբ տնայնագործն ու արհեստավորը չեն կարող զբաղվել իրենց սովորական աշխատանքով և դրա համար ել կորցնում են իրենց վաստակը:

Ուրիշ խոսքով, փոխոգնության գանձարկից տնայնագործին ու արհեստավորին ոժանդակություն արվում է միայն հիվանդության զեպում, յերբ դրա հետեանքով աշխատունակությունը կորսվում է և տնայնա-արհեստագործական արդյունաբերությունը այլևս աշխատավարձն չի վճարում գանձարկի անդամին:

Այսպիս ուրիմն փոխոգնության գանձարկից արված ոժանդակությունը նպատակ ունի հիվանդության դեպքում իր անդամի կորցրած աշխատավարձը փոխարինել, Յեթե տնայնագործը կամ արհեստավորը կարողանում է հաղթահարել իր հիվանդությունը, մի կերպ շարունակել իր աշխատանքները և աշխատավարձը չկորցնել, ապա և փոխոգնության գանձարկը հիվանդության համար նրան ոժանդակություն չի տալիս:

Վորպեսպիս հիվանդության դեպքում ոժանդակություն տրվի, փոխոգնության գանձարկը, ի հարկե պետք և ապացույցներ ունենա, թե իր անդամը իսկապես հիվանդ և յեղել և հիվանդության ժամանակամիջոցում աշխատավարձ չի ստացել: Փոխոգնության գանձարկին այդպիսի ապացույց պարտավոր և ներկայացնել հենց ինքն՝ հիվանդը: Այդ ապացույցը լինում է հիվանդության թերթիկը: Վոր հիվանդին տալիս ի բժիշկը, իսկ բժիշկ չեղած ժամանակ՝ հատուկ այդպիսի թերթիկներ տալու իրավունք ունեցող փեղութերը:

Հիվանդության թերթիկի վրա պետք է ձգրիտ կերպով ցույց տրված լինի, թե թնջ հիվանդություն և յեղել, զորքան ժամանակ աշխատանքի անընդունակ և համարվել և, զրանից բացի, արտելի (ընկերության) զիտողությունը, թե զրամարկի անդամը հիվանդության թերթիկի վրա մատնանշված ժամանակաշրջանի ընթացքում իսկապես չի աշխատել և աշխատավարձ չի ստացել:

Վորպեսպիս իրական, իսկական լինի գանձարկի ոգնությունը, վոր նա տալիս և իր անդամին հիվանդության ժամանակամիջոցի համար, պետք և գանձ-

արկղի տված ոժանդակությունը հիվանդի սովորական միջին աշխատավարձից պակաս չլինի։ Դրա համար են ներկայումս, փոխողնության բոլոր գանձարկղները ձգտում են իրենց հիվանդ անդամներին տալ նըանց լրիվ աշխատավարձը, վոր հիվանդության պատճառով չեյին ստացել Միայն թե, բոլոր գանձարկղներն են հնարավորություն չունեն իսկույն և եթ իրականացնելու իրենց ձգտումները, վորովհետև դրա համար խոշոր միջոցներ են հարկավոր։

Այդ պատճառով, մի շաբք գանձարկղներ կան վորոնք հիվանդներին տալիս են իրենցլրիվ աշխատավարձը որինակի (համար Վլաղիմիրի, Որենբուրգի, Պերմի, Սարադովի և Տոմսկու և Հայաստանի մեջ)՝ բայց ուրիշ տեղեր գանձարկղներ ել կան, վորոնք հիվանդին տալիս են իր աշխատավարձի մի մասը միայն (60—80%), Այսպես, որինակի համար Կալուգայի, Բոգոդսկու, Սամարայի, գանձարկղները հիվանդին ոժանդակություն տալիս են աշխատավարձի 75% է չափով Վիհանգայի Բայլցերսկի և Տյումենի մեջ զժարում են աշխատավարձի 60% ի չափով, և այլն։

Թեև բոլոր գանձարկղներն հիվանդության դեպքում ոժանդակություն չեն տալիս աշխատավարձի լրիվ չափով, այնուամենայնիվ ապահովագրության այդ տեսակի ծախսերը ներկայումս արգեն դրամարկղից խլում են բավական շատ միջոցներ։ Այսպես՝ 1928 թ. 37 գանձարկղներ, վոր միջին հաշվով չորս ամիս եյին աշխատել, հիվանդության, հղիության և ծննդարերության առթիվ իրեն ոժանդակություն զժարեցին մոտ 700 հաղար սուբլի։

## 8. Ոժանդակություն մայրության համար

Աշխատավոր կնոջ ծանր ու վասակար աշխատանքը կորստաբեր աղղեցություն և ունենում վոչ միայն կնոջ առողջության վրա, այլ նաև նրա սերնդի վրա։ Դեռևս մոր արգանդում, թունավորվելով վասակար նյութերից, վոր գործածվում են արդյօւնաբերության մեջ, աշխատավոր կանանց յերեխաները, մոր որգանիզմից ստանալով իրենց սնունդը, ծնվում են վաղաժամ, տկար, լղարիկ, առանձնապես տրամադիր ամեն տեսակ հիվանդության, և հազարներով մեռնում են իրենց կյանքի հենց առաջին որերում կամ ամիսներում։ Այսպես, մի գերմանացի գիտնական՝ Մակաշիրշը՝ տվյալներ ե բերում, վորով ցույց ե տալիս վոր 100 ծծկեր յերեխաներից միայն 4 են մեռնում։ Գերմանական բարձրաստիճան ծառայողների շրջանում՝ ստորին ծառայողների շրջանում՝ 14 յերեխա, իսկ հասարակ բանվորներից 24 յերեխա։

Աշխատավոր կանանց յերեխաների մահացությունը շատ խոշոր չափով կախում ունի այն հանգամանքից, թե կինը ծննդաբերությունից առաջ աշխատանքի դադար՝ հանգիստ ունեցել ե, թե վոչ։

Մի ուսու պրոֆեսորի՝ Ն. Ի. Վիգորսի կիւտյանը աշխատավորի համաձայն, մինչեւ ծննդաբերությունն աշխատող կանանց յերեխաները համեմատելով ծննդաբերությունից առաջ հանգստացող կանանց յերեխաների հետ, կշորի մեջ մեծ տարրերություն և նը կատվել։

Յերբ մայրերը	հանգստացել	են 10 որ - 25 դրամ
»	»	» 20 » - 150 »
»	»	» 30 » - 230 »
»	»	» 40 » - 410 »

Ծննդաբերությունից առաջ մոր հանգստանալը շատ մեծ նշանակություն ունի վոչ միայն յերեխայի այլ և հենց մոր համար ել:

Յերբ կանայք ծննդաբերությունից առաջ չեն հանգստանում, զրանից, հաճախ, առաջ են գալիս վաղաժամ և անկանոն ծննդաբերություններ, վորից և կանայք հիմանդանում են: Նույն պրոֆեսոր Ն. Ա. Վեդուրչիկը առաջույց և տալիս, վոր հղիության մինչև վերջին ըոպեն աշխատող կանանց մեջ նկատվել և 7 անգամ ավելի շատ անկանոն ծննդաբերություն, քան այն կանանց մեջ, վորոնք ծննդաբերությունից առաջ մի քանի շաբաթ հանգստացել եյին:

Աշխատավոր կանանց առողջության համար վերին աստիճանի խոշոր նշանակություն ունի վոչ միայն ծննդաբերությունից առաջ կատարած դադար—հանդիսաբար, այլ նաև ծննդաբերությունից հետո: Այն հսկայական ցնցումներից հետո, վոր կը ունի կինը ծննդաբերության ժամանակ, կնոջ որդանիդմն աստիճանաբար միայն, 6-8 շաբաթվա ընթացքում հազիվ հարողանում և նորմալ վիճակի մեջ մտնել:

Ծննդաբերության այս առաջին ժամանակաշրջանում կինը շատ տրամադիր և լինում ամեն տեսակի հիմանդության, հատկապես, կանանցի հիմանդությանց: Այդ պատճառով ել ամեն տեսակի լարում, չափազանց հոգնություն և ծանր աշխատանքը վոչ միայն դժվարացնում են, վոր. կնոջ որդանիդմը վերադառնա իր

նորմալ վիճակին, այլ և առաջ են բերում բազմաթիվ կանացի հիմանդություններ, վորոնք, շատ հաճախ, ընկերանում են նրան իր ամբողջ կյանքի ընթացքում:

Այս ասածներից պարզ է, թե աշխատավոր կնոյն առողջության համար ինչ մեծ նշանակություն ունի ծննդաբերությունից առաջ և ծննդաբերությունից հետո հանգստանալը:

Ցուրաքանչյուր կին, իհարկե զգում և խոստովանում և հանգստանալու այդ կարեսոր նշանակությունը:

Սակայն, զդվար թե վորեւ կին կարողանա իրեն աղատություն տալ աշխատանքից հեռանալու ծննդաբերությունից 6-8 շաբաթ առաջ և ծննդաբերությունից 6-8 շաբաթ հետո: Աշխատավոր կինը, անայնագործ կինը, վոր ապրում և իր աշխատանքից տված աշխատավարձով, շատ լավ հասկանալով հանդերձ, թե ինչքան վաշասկար և ծննդաբերությունից առաջ և ծննդաբերությունից հետո աշխատելը, այդպիս հասարակ կերպով չի կարող հրաժարվել իր աշխատավարձից, վոր նրա գոյության միակ աղքյուղն և հանդիսանում, և հանգստանալու գնալ 12-16 շաբաթ:

Վորպեսզի աշխատավոր կինը կարողանա իրեն այդպիսի աղատություն տալ, նա պետք և վոտահ լինի, վոր ծննդաբերությունից առաջ և ծննդաբերությունից հետո իր աշխատանքը թողնելով նա չի դը՛ք վուս իր աշխատավարձից:

Այն կանայք, վոր վարձով աշխատում են ֆաբրիկաներում, գործարաններում, այդպիսի վոտահություն նրանց տալիս և սոցիալական ապահովագրության գանձարկը, նրանց ըոլորին ապահովագրելով: Ամեն կին, վոր վարձով և աշխատում, դիտե, թե հրի-

ության և ծննդարիրության շրջանում աշխատանքը թռղնելով և հանգստանալու գնալով, կարող է իր աշխատավարձը ստանալ սոցիալական ապահովագրության գոնձարկղից:

Մինչև վերջին ժամանակներս տնայնագործ կանց համար այդպիսի վստահություն չեր կարող լինել, վորովհետև սոցիալական ապահովագրության գանձարկղը նրանց չեր ապահովագրում:

Իսկ այժմս, լերբ տնայնագործներն ու արհեստագործներն ունեն իրենց սոցիալական ապահովագրությունը, վոր կատարվում ե արհեստագործական կոռպերացիայի փոխոգնության գանձարկղի միջոցով, տնայնագործ կանայք՝ անդամագրվելով այդ գանձարկին՝ կարող են իրենց աշխատավարձի համար այլևս հոգս չանել:

Արհեստագործական կոռպերացիայի փոխոգնության գանձարկղները, ճիշտ ինչպես սոցիալական ապահովագրության գանձարկղները, տնայնագործ կանանց տալիս են իրենց աշխատավարձը 6-8 շաբաթ ծննդարերությունից առաջ և 6-8 շաբաթ ծննդարերությունից հետո: (Մինչև ծննդարերության և հետծննդարերության շրջանի համար տրվելիք ոժանդակության ճիշտ ժամանակը վրամարկղի փինանսական որոշումը՝ նկատի ունենալով դրամարկղի փինանսական որոշումը և այլ հանդամանքները):

Փոխոգնության գանձարկղներում ծննդարերության և հետ ծննդարերության շրջանի համար տրվելիք ոժանդակության չափը նույնպես տարբեր է, ինչպես և հիվանդության համար տրվելիք ոժանդակության չափը:

Մի քանի գանձարկղներում կանանց տրվում ե իրենց լրիվ աշխատավարձը. ուրիշներ ել կան, ուրմի քիչ պակաս ե տրվում, ասենք աշխատավարձի 75 կամ 60 տոկոսը:

Սակայն, փոխոգնության բոլոր գանձարկղներն ել շատ լավ հասկանում են, վոր տնայնագործունուն իր լրիվ աշխատավարձը չտալով, նրան դնում են այն դրության մեջ, վոր նա կցանկանա թե՛ ծննդարերությունից առաջ և թե ծննդարերությունից հետո իրեն տրված հանգստի ժամանակը կրծատել և դրանով իր առողջությանը վնաս հասցնել: Այդ պատճառով, փոխոգնության բոլոր գանձարկղները ըստ ամենայնի ձգտում են տնայնագործունուն վճարել իր լրիվ աշխատավարձը հղիության և ծննդարերության առթիվ հանգստի զնալու ժամանակի համար. Իսկ այժմ արդեն թե ինչքան նշանակալից և հղիության և ծննդարերության առթիվ փոխոգնության գանձարկղի տված ողնությունն, այդ կարելի յե դատել այն փաստից, վոր մենակ փոխոգնության Մուկվայի գանձարկղը 1928 թ.՝ մայրությանն ոժանդակություն տալու համար՝ 45.000 ռուբլուց ավելի յելք ե կատարել:

## 9. Յերեխայի նպաստներ

Հղիության և ծննդարերության առթիվ փոխոգնության գանձարկղի տված ոժանդակությունը վորոշ նպատակով ե արվում, վորպեսզի մոր և յերեխայի կյանքն ու առողջությունը պահպանվի (մայրության և մանկության պաշտպանություն):

Բացի դրանից, փոխոգնության գանձարկղը միե-

նույն նպատակին հասնում ե նաև նրանով, վոր ծնընդարձությունից հետո յել նպաստ ե տալիս յերեխային մոռւնդի համար և գորպես ոժիտ:

Հայտնի յե, վոր, ծննդարձությունից դեռ շատ առաջ, յուրաքանչյուր կին, վոր մայր ե լինելու, իր մտքում մի մեծ հոգս ունի, ապագա քաղաքացի տղայի կամ աղջկա համար պետք ե պատրաստել անհրաժեշտ հագուստ—կապուստը։ Պետք ե պատրաստել փաթաթելու շորեր և շապիկներ, որորոց և փոքրիկ վերմակ, լողանալու համար տաշտ կամ լողարան, և այլն, և այլն։

Իսկ բոլորի համար հարկավոր ե փող, սակայն փողը ծաբրը ծայրին չի հասցնում. ինչ անհիլ Յեկուրախությունը, վոր աղքատի ընտանիքում առաջ ե գալիս ապագա «ժառանգին», սպասուիլուց, մոռայլվում ե զանազան հաշիվներով, վոր հաճախ վերջանում ե այնտեղ, վոր նորածին մանկան պարուրում են մոր հին շապիկվ, կամ, ավելի վատ՝ մի տոպքակի մեջ։ Հետո, գեռ ավելին։ Նորածին մանուկը պահանջում ե սնունդ, վոր նա կշտանա կամ մոր ստինքներից, կամ ել արհեստական մնուցման յեղանակով։ Յերեխային ստինքով մնուցելը տկարացնում ե մայրական որգանիքմը, վոր այդ պատճառով ուժեղ սնունդ ե պահանջում։ Արհեստական մնուցման համար պետք ե զանազան բաներ դնել—կաթ, կրուպա և այլն։ Յեկ ահա, թե այն ժամանակ, յերբ մայրը յերեխային մնուցում ե ստինքով, և թե այն ժամանակ, յերբ նրան արհեստական մնուցում ե տալիս, ընտանիքի ծախուերը մնծանում են, Յեկ սակայն, բանվորի, տնայնագործի ու արհեստավորի ուժից վեր ե ծախսերի այդպիսի մեծա-

ցումը, գրա համար, վոչ մայրը, վոչ ել յերեխան չեն ստանում այն, ինչ վոր ամհրաժեշտ ե նրանց որպահնիզմի համար։ Դրանից ել մալրն ու յերեխան հյուծվում են և աղքատ յերեխաների մահացությունն աճում ե։ Մենք արդեն թվեր բերինք, վորոնք ցույց են տալիս, թե ժողովրդի աղքատ խավերում յերեխաների մահացությունն ինչ չափով տարածված է։ Այդ տվյալներից հայտնի դարձավ, վոր ժողովրդի այդ խավերում նկատվում ե յերեխաների հսկայական մահացությունը, վորի պատճառներից մեկն ել հանդիսանում է սնունդին մոր և յերեխաների սննդառության անրագարարությունը։ Այդ պատճառով, այս չարիքը մեղմելու համար, արհեստագործական կոռակերացիայի փոխոգնության գանձարկղները, ինչպես ցույց տվինք, ներկայումս յերեխային ոժանդակություն են տալիս իբրև ոժիտ և սնվելու համար։

Այդ ոժանդակությունը տրվում ե վոչ մայն այն պարագային, յերբ գրամարկղի անդամ՝ տնայնագործ կինն ե, վոր յերեխա յե բերում, այլ նաև այն պարագային, յերբ գրամարկղի անդամ՝ տնայնագործի կամ արհեստավորի կինն ե, վոր յերեխա յե բերում։

Իբրև ոժիտ տրված ոժանդակությունը տրվում է միանվագ, սովորաբար ծնվելուց անմիջապես հետո, և այն չափով, վոր գանձարկղի լիազորական ժողովը վորոշել ե։

Իսկ յերեխայի սնուցման ոժանդակությունը, սովորաբար, տրվում ե ամսականով, ծննդարերությունից հետո 6-9 ամսվա ընթացքում, և այն չափով, վոր դարձյալ գանձարկղի նույն լիազորական ժողովը վորոշում ե։

Հիազորական ժողովը սժանդակության չտփը վորոշում և նկատի ունենալով գանձարկղի ֆինանսական գիճակը: Դրա համար, այդ ոժանդակությունները բարձր են այն գանձարկղներում, վորոնք ամուր դիրք ունեն, և փոքր են այն գանձարկղներում, վորոնք ֆինանսական տեսակետից զեռևս ամուր վիճակ չունեն: Այս րոպեյիս, փոխողնության վոչ մի գանձարկղ չկագրեթե, վոր այդ ոժանդակությունները չտար: Փոխողնության գանձարկղներն այդ ոժանդակությունները առավ նշանակալից զումարներ են ծախսում: Այդ մենք տեսնում ենք այն բանից, վոր 1928 թ. միջին հաշվով չորս ամիս աշխատող 37 գանձարկղներ միայն, յերեխայի ոժիտի և սնունդի համար ոժանդակություն են տվել մոտ 150 հազար ռուբլի:

## 10. Հաօմանդամության պենսիա

Հիվանդությունները, սովորական հիվանդությունները, վորոնք, ինչպես վերևում տեսանք, տնայնագործների և արհեստավորների շրջանում այնքան լայն ծավալ են ստացել, շատ հաճախ առաջ են բերում աշխատունակության վոչ միայն ժամանակավոր, այլև մշտական կորուստ (հաշմանդամություն):

Գերմանիայում, ուր տասնյակ տարիների աշխատանքից հետո, ապահովագրական գանձարկղներում մի տեսակ հավասարակշռություն և առաջ յեկել հաշմանդամերի թվի վերաբերմամբ, ամեն հազար ապահովագրվածներին գալիս և 60-70 հաշմանդամ, վորոնք գանձան տեսակի հիվանդությունների պատճառով կորցրել են իրենց աշխատունակությունը:

Հաշմանդամության հաճախողեալ պատճառների մեջ առանձնակի տեղ ե բոնում թոքախտը, վոր աղնայնագործների և արհեստավորների շրջանում այդպիսի լայն ծավալ ունի շնորհիվ նրանց կյանքի ու աշխատանքի անբավարար պայմանների:

Այսպես, գերմանական տվյալների համաձայն, հարյուր զեղքից մոտավորապես 20-ի մեջ թոքախտը հանդիսանում է հաշմանդամության հիմնական պատճառը: Արտադրության մեջ տեղի ունեցող դժբախտ պատահարները նույնպես պակաս թվով հաշմանդամներ չեն ստեղծում:

Այսպես նաև Ռուսաստանում, հեղափոխությունից առաջ արդունաբերության մեջ լինում եր մոտ 325 հազար դժբախտ գեղք, վորից մոտ 30,000-ը հաշմանդամությամբ եր գերջանում:

Այս արդյունաբերությունները, վորոնք առանձնապես շատ զեղքեր են տալիս դժբախտության, նըրանց մեջ վերջին տեղը չեն ըստում նույնպես այն արդյունաբերությունները, վորոնց մեջ տնայնագործներ և արհեստավորներ են աշխատում:

Ինչպես գիտնականները հաշվել են, սովորաբար կը ու սպասավորներն ամենից քիչ ունեն դժբախտ գեղքեր: Այսպես առաջ համեմատելու լինենք նըրանց մահացությունը, վոր առաջ և յեկել դժբախտ գեղքերից, արհեստավորների ու տնայնագործների մահացության հետ-այն ժամանակ հայտնի յե լինում, վոր զանազան դժբախտ զեղքերից առաջ յեկածը, հոգեվորականներին 100 մահացությունն ընկնում, իսկ 255 մահացու դժբախտ զեղք՝ մուշտագործների մեջ, 1133 զեղք՝ կտուր շինողների մեջ, 1844 զեղք՝ վո-

Խաղրող կառապանների մեջ իսկ ձկնորսների մեջ  
արդեն՝ 1444 դեպք:

Յեվ, իհարկե, այս փաստերը զարմանալու բա-  
ներ չեն:

Տերտերը, մոլլան կամ ռաբբին չեն մազլցում  
կտուրների վրա, ինչպես վորմաղիրը, բաշ չեն տալիս  
հսկայական ծանրություններ, վորից կարելի յե վնաս  
վածքներ ստանալ և վորոնք կարող են մահ պատճա-  
ռել, ինչպես փոխադրող կառապանը, և չեն մտնում  
փոթորկված ծովը, ինչպես ձկնորսը:

Այդ պատճառով տերտերին, մոլլային և ռաբբի-  
նին շատ ավելի քիչ զժրախտ գեղքեր են պատահում,  
քան վորմագրին, կառապանին և ձկնորսին:

Արդյունաբերության մեջ հիվանդություններից  
և դժբախտ պատճարներից բացի, վերջին հաշվով,  
հաշմանդամության և առաջնորդում, հասկանալի յե  
իհարկե, նաև ծերությունը, վորին ընկերանում և  
մշտապես ուժի և աշխատունակության անկումը:

Այն անայնագործը կամ արհեստավորը, վոր հի-  
վանդության պատճառով, կամ արդյունաբերության  
մեջ պատահած զժրախտ գեղքի պատճառով հաշման-  
դամ և դասնում, իհարկե, ընկնում և շատ ավելի  
թշվառ դրության մեջ քան այն անայնագործը կամ  
արհեստավորը, վորը հիվանդանում և ժամանակավորա-  
պես:

Այն անայնագործը կամ արհեստավորը, վոր հի-  
վանդանում և ժամանակավորապես, գոնե հույս ունից  
թե մի կերպ կառողջանա, հիվանդությունից հետոնո-  
րից վոտքի կանգնի: Հաշմանդամն այդ հույսն ել չու-  
նի: կարիքը, բաղցը, ցուրտը, մուրացկանի տոպրուկը,

անմ թե, հաշմանդամ դառնալիս, ինչ և սպասում բո-  
լոր նրանց, վորոնք ապրում են իրենց սեփական աշ-  
խատանքով:

Պարզ ե, վոր այստեղ ես, տնայնագործին ու ար-  
հեստավորին անհրաժեշտ ե կողմնակի ոժանդակու-  
թյուն: Արհեստավործական կոռպերացիայի փոխոզնու-  
թյանդանձարկղներն այս զեղքում ել ոկնության են  
հասնում իրենց անդամներին:

Վորեւ տնայնագործ և արհեստավոր, վոր վորոշ  
ժամանակաշրջանի (այդ վորոշում ել լիազորների ժո-  
ղովը, ինչպես մի քանի գանձարկղներում՝ 2-3 տարի,  
ուրիշներում՝ 4-5 տարի) ընթացքում գանձարկղներին  
անդամ ե յիսկեւ, հաշմանդամ դառնալիս պեսսիա յե  
ստանում, վորի չափը կախում ունի իր աշխատունա-  
կությունը կորցնելու աստիճանից:

Եկրկայումս, անաշխատունակության աստիճանի  
համաձայն, հաշմանդամները բաժանվում են 6 խմբի:

Առաջին խմբին պատկանում են այն հաշման-  
դամները, վորոնք վոչ միայն վորեւ աշխատանքի ան-  
ընդունակ են, այլև նույնիսկ ուտելու, խմելու, հագն-  
վելու և այլ բաների համար կարիք ունեն կողմնակի  
աջակցության:

Եկրկրորդ խմբին պատկանում են այն հաշման-  
դամները, վորոնք թեև կողմնակի աջակցության կա-  
րիք չունեն, բայց աշխատանքի բացարձակապես ան-  
